

---

**ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ**

**ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

***Ջավախահայության հիմնախնդիրների առաջացման ու զարգացման  
պատճառները***

Վրաստանում էթնիկ ու կրոնական համայնքների նկատմամբ ներքին քաղաքականությունը երբեք հրապարակային ու մատչելի չի եղել: Ընդ որում, բոլոր ժամանակների իշխանությունների օրոք այդ ոլորտի իրական ծրագրերն ու մտադրությունները նախապես հրապարակային քննարկումների առարկա չեն դարձել: Այն միշտ եղել է զաղտնի գործընթաց և երբեք չի հասել հասարակական հարթակներին: Այդպես էր Վրացական առաջին հանրապետության ժամանակ (1918-1921 թթ.), խորհրդային շրջանում, Գամսախուրդիայի ու Շևարդնաձեի օրոք և անփոփոխ է մնացել մինչ օրս: Ավանդական այս քաղաքականության հաջորդականությունը ապահովել ու ամրապնդել են վրացական հասարակության առանձին, ազգայնական շերտերը, որոնց անմիջական «աջակցությամբ» ավելի է բարդացել իրավիճակը: Այսինքն՝ առանց վարանելու կարելի է ասել, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Վրաստանում ցեղապաշտական տրամադրությունները գերակա են դարձել զանգվածային գիտակցության մեջ ու ենթարկվել են որոշ ստազնացիայի:

Այսպես, «Բարեփոխումների ժամանակը» ծրագրի շրջանակում «Տարածաշրջանային մամուլի վրացական ասոցիացիայի» իրականացրած սոցիալական հարցման արդյունքների հրապարակումից (2006 թ.) տեղեկանում ենք, որ վրացիների՝ որպես էթնիկ մեծամասնության և տիտղոսային ազգի, վերաբերմունքը սեփական փոքրամասնությունների նկատմամբ արտահայտվում է հետևյալ կերպ: Ետխորհրդային Վրաստանի վրացի քաղաքացիների ճնշող մեծամասնությունը գտնում է, որ ազգային փոքրամասնությունները հասարակական ու պետական կյանքում որևէ լուրջ դերակատարություն չպետք է ունենան և հարցվածների 72,2%-ը հայտարարել է, թե ազգային փոքրամասնությունների խնդիրները կարելի է լուծել նրանց երկրից վտարելով միայն, իսկ 8,8%-ը ելքը տեսնում է ձուլման մեջ և միայն 18,5 %-ն է առաջարկում ստեղծել բարենպաստ պայմաններ նրանց կրոնա-մշակութային ինքնությունը պահպանելու, վրացերեն ուսումնասիրելու և հետագայում վրացական պետության լիիրավ անդամներ դառնալու համար<sup>1</sup>:

Ջարմանալի է, որ այդ տարածքում հարյուրավոր տարիներ համատեղ ապրելուց հետո ազգային անհանդուրժողականության անջրպետը նորանկախ Վրաստանում ոչ թե նվազել է, այլ ավելի է խորացել:

---

<sup>1</sup> Տե՛ս "Javakhk – The Hidden Truth". (Ջավախք. Քողարկված իրականություն), JAVAKHK.net, Ջավախքի Տեղեկատվական շեմ, The majority of Georgians are willing to expel ethnic minorities from their country, 05.02.2006, www.djavakhk.com/index.php?page=1&i=0&l=am

Հիրավի, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից շատ քչերն են ներկայացված ու ներգրավված այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքում, կառավարման ոլորտում, որոշումների ընդունման գործընթացում և ընդհանրապես բոլոր մակարդակներում: Էթնիկ փոքրամասնությունները խորհրդարանում կազմում են ընդամենը 6 տոկոս և գրեթե ներկայացված չեն կառավարության վարչակազմում: Ինչ վերաբերում է փոքրամասնությունների համախումբ բնակության վայրերին և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքին, ապա այստեղ մասամբ ներկայացված են, սակայն պաշտոնատարների թիվը բնավ համաչափ չէ տարածքի բնակչության էթնիկ կառուցվածքին ու խտությանը:

Վերջին տարիներին Վրաստանը որքան ավելի է փորձում ինտեգրվել արևմտյան հանրությանն ու արժեքներին և որքան ավելի է ձգտում կատարելագործել ներքին օրենսդրությունը, այնքան ավելի է վատթարանում էթնիկ փոքրամասնությունների վիճակը բոլոր ուղղություններով՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, լեզվամշակութային և այլն: Ինչևէ, արևմտյան գործընկերների առջև ստանձնած պարտավորությունները ընդգրկում են նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների հարգում, ինչն էլ Վրաստանին պարտադրեց վավերացնելու միջազգային այնպիսի իրավական փաստաթղթեր, ինչպիսիք են «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան» (1995 թ., որն, ի դեպ, ընդունվել է վերապահումներով), «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան», «Տարածաշրջանային լեզուների կամ փոքրամասնությունների լեզուների մասին խարտիան», «Լուևդի հանձնարարականները» (1999 թ.) և այլն: Տպավորությունն այնպիսին է, որ Արևմուտքը կարծես մտադրված է հետևողականորեն վերահսկելու վրացական պետության էթնիկ արդի քաղաքականությունը և այդ բնագավառում ստանձնած պարտավորությունների կատարումը, սակայն իրականում պատասխանատու պահերին առաջատար այնպիսի կառույցներ, ինչպիսիք են ԵԱՀԿ-ն, ԵԽԽՎ-ն, ԵՄ նախարարների խորհուրդը, իրենց վերաբերմունքը արտահայտում են բավական մակերեսորեն: Մինչդեռ հակառակ պատկերն ենք տեսնում, երբ խոսքը վերաբերում է հաղորդակցության ու էներգակիրների ուղիների Վրաստանի մասնակցությանը, վերջինիս անվտանգությանը և զինված ուժերին: Այս առումով ԱՄՆ-ը և Եվրոպական հանրությունը Վրաստանի նկատմամբ իրենց գնահատականներում բավականին համերաշխ են. առավելապես ազգային փոքրամասնությունների վտանգավոր ու անհապաղ լուծում պահանջող խնդիրների շուրջ:

Ինչևէ, Հարավային Կովկասում սեփական գեոստրատեգիական նպատակների իրականացման ճանապարհին Արևմուտքը ամեն զնով կփորձի պահպանել Վրաստանի գոնե առկա մոնոլիթությունը, թույլ չի տա տարածավարչական կառուցվածքի նոր փոփոխություններ կամ էլ էթնիկ ընդգծված լարվածություններ և շատ դեպքերում երևի կանտեսի ազգային փոքրամասնությունների նկատմամբ վրացական իշխանությունների խտրական քաղաքականության դրսևորումները:

Էթնիկ փոքրամասնությունների հիմնախնդիրները ստիպում են մտածել հեռանկարում Վրաստանում բազմամշակութային հասարակության կամ ֆեդերալ կառուցվածքի մասին: Դա անգամ պատմականորեն ճիշտ կլիներ, քանզի Վրաստանը մշտապես եղել է բազմաէթնիկ:

Այսօրվա վրացական իշխանությունների էթնիկ պատեհապաշտ քաղաքականությունը շատ դեպքերում հասարակությանը տանում է փակուղի: Պաշտոնական թբիլիսին, չնայած ժողովրդավարական և եվրոպական արժեքներին համակողմանի ու անմնացորդ նվիրվածության հայտարարություններին, իրականում ազգային փոքրամասնությունների նկատմամբ որդեգրած քաղաքականությունը ոչ միայն դրական փոփոխության չի ենթարկել, այլ ավելի է խորացրել հակասությունները:

Վրացական պետականության հիմնասյուններից է համարվում էթնոցենտրիզմը, սակայն պետությունը չի կատարում իր առաջնային պարտականությունը, այն է՝ սատարել քաղաքացիական հասարակության կայացմանը նաև փոքրամասնությունների շրջաններում և վրացական բարդ ու հակասական հասարակությունում ստեղծել միջէթնիկ հարաբերությունների ներդաշնակություն: Այսօր կարելի է առանց ավելորդ բարդությունների ընդառաջել ինչպես Ջավախքի հայերին, այնպես էլ Քվեմո-Քարթլիի ազերիներին և ընդհանրապես Վրաստանում ապրող այլ փոքրամասնություններին, նրանց տրամադրելով ինքնակառավարման ու վարչական ավելի լայն լիազորություններ, իսկ վաղը նույն այդ համայնքների առաջընթացի հաշվին ամրապնդել պետականությունը ու դարձնել այն ավելի գրավիչ միջազգային ասպարեզներում: Իսկ պաշտոնական թբիլիսին դեռ փորձում է անջատողական դավեր ու հիմնականում մոսկովյան «մատնահետքեր» բացահայտել ազգային ու ներքաղաքական յուրաքանչյուր իրադարձության մեջ:

Մյուս կողմից՝ փոքրամասնությունների կազմակերպված խմբավորումների նկատմամբ խտրականության և իրավունքների ոտնահարման նման քաղաքականությունը անհնար է իրականացնել առանց ուժային և իրավապահ մարմինների: Տպավորությունն այնպիսին է, որ ասես պետական միակ գերատեսչությունը, որը «զբաղվում է» փոքրամասնությունների հրատապ խնդիրներով, Վրաստանի ներքին գործերի և անվտանգության (ՆԳԱ) նախարարությունն է: Եվ պատահական չէ, որ էթնիկ տարածաշրջաններում հաճախ կրկնվող քրեական միջադեպերի ու բախումների դեպքում նախագահ Սահակաշվիլին հակված է մեղադրել կամ, ավելի ճիշտ, այն վերագրելու իր ՆԳԱ նախարարության աշխատանքի թերացումներին:

Իրավիճակն ավելի սրելու և անգամ հակասություններն ավելի խորացնելու գործում մեծ է Վրաստանի ՁԼՄ-ների դերը: Էթնիկ փոքրամասնությունների տարբեր խնդիրների ու պահանջների, անգամ բողոքի ցույցերի շուրջ ընթացող քննարկումների նկատմամբ ընդունված են մեկնաբանությունների հստակ կարծրատիպեր: Այսինքն՝ դրանք նախ և առաջ ներկայացվում են որպես հակավրացական ու դավաճանական, հակապետական, վերջապես ռուսական լրտեսական հերթական դավեր, այսինքն՝ նույն «կոնսպիրացիայի» շարունակությունն է:

Չնայած էթնիկ տարածաշրջաններում ներքին ու արտաքին ներդրումային բազում ծրագրերին, որոնք կոչված են ինչ-որ չափով թեթևացնելու տեղաբնակների հոգսերը, այնուամենայնիվ Վրաստանի քաղաքական ղեկավարությունը առիթը բաց չի թողնում բյուրոկրատական ու արհեստական արգելքներ հարուցելու դրանց իրագործման ճանապարհին: Ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև ջավախահայերի սոցիալ-տնտեսական և մշակութային կարևոր խնդիրների լուծման ու հե-

տագա զարգացման գործընթացները միշտ արհամարհանքով է ընդունել վրացական քաղաքական դեկավարությունը: Այսօր Վրաստանի ազգային փոքրամասնությունները փաստորեն ի վիճակի չեն հստակեցնելու իրենց փոխհարաբերությունները պետության հետ քաղաքական բարձր մակարդակով, քանզի էթնիկ ծագման քաղաքական կուսակցությունների ստեղծելը օրենսդրությամբ արգելված է:

Այնուհանդերձ, ինչ վերաբերում է Վրաստանի ողջ հասարակության քաղաքացիական ինտեգրման գործընթացին, ապա այդ ուղղությամբ առաջին դրական քայլերն արվել են անկախության առաջին տարիներին: Բոլոր այն անձանց, ովքեր 1993 թ. դրությամբ բնակվում էին Վրաստանում, շնորհվել է քաղաքացիություն<sup>2</sup>: Իհարկե, սրանով որակապես նոր և ավելի բարձր աստիճանի հասցվեց «Վրաստանի քաղաքացի» գաղափարը:

Գաղտնիք չէ, որ հայ - վրացական փոխհարաբերությունների առավել բարդ ոլորտ է Ջավախքը և այնտեղ տիրող սոցիալ-տնտեսական, լեզվամշակութային, կրթական, վարչական, քաղաքացիական ու հոգևոր իրավունքների անմխիթար վիճակը: Հավելենք Հայաստանի հետ տրանսպորտային հաղորդակցության պարբերական խափանումները, հայոց լեզվի կարգավիճակի, բռնազավթած եկեղեցիների վերադարձման և Հայ Առաքելական եկեղեցու կարգավիճակի հարցերը, հայ-վրացական սահմանին հայալեզու գրականության, մշակութային արժեքների անհիմն առգրավումները և այլն: Ջավախքում հայ բնակչությանը մինչև վերջերս մեծապես անհանգստացնում էր ռուսական ռազմական հենակետի դուրսբերումից հետո տնտեսական ու կենսական հարցերի հաղթահարման, թուրք-մեսխեթների հնարավոր վերաբնակեցման և տարածաշրջանում թուրքական ռազմական գորամիավորումների հնարավոր տեղակայման (ԲԹՋ նավթատարի ու գազատարի անվտանգության ապահովման պատրվակով) խնդիրները:

Վրացական, մասամբ էլ հայկական որոշ քաղաքական գործիչներ ու մեկնաբաններ պնդում էին (նույնիսկ մինչև վերջերս), թե Վրաստանի ու Հայաստանի իշխանությունների միջև իբր գոյություն ունեն չիրապարակված պայմանավորվածություններ, հատկապես Ջավախքի արդի հիմնախնդիրների շուրջ և ինչ-որ «խաղի» կանոնների վերաբերյալ: Սակայն, մեր կարծիքով, այդ պայմանավորվածությունները տարածաշրջանային արդի հակասական խնդիրների պարագայում բնավ չեն կարող գործել, քանի որ Վրաստանը մտադիր չէ պահպանելու սկզբունքային ու երկարատև պայմանավորվածություններ տարածաշրջանի որևէ պետության հետ:

### ***Քաղաքական կարգավիճակի հարցը***

Ջավախահայության արդի ամենահրատապ խնդիրներից է, թերևս, քաղաքական կարգավիճակի հարցը: Դա տարածքային կամ մշակութային ինքնավարություն ստեղծելու մասին ընդամենը ցանկություն է, որը, ինչպես մեր հայրենակիցներն են պատկերացնում, պետք է ընդգրկի Ախալցխայի, Ախալքալաքի, Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկա) և հարևան Ծավկայի (Քվեմո-Քարթլի նահանգի) հայաշատ շրջանները և պարզապես կոչվի Ջավախք Վրաստանի կազմում:

<sup>2</sup> Տե՛ս **Սերգեյ Մինասյան**, Վրաստանի էթնիկական փոքրամասնություններ. համարկման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով, CMI Caucasus Media Institute, «Երկիր» հասարակական կազմակերպությունների միություն, Եր., 2006:

Ինչևէ, ջավախահայերը գտնում են, որ այսօրվա ժողովրդավար Վրաստանը, որը միջազգային կառույցներում ստանձնել է իր տարածքի էթնիկ փոքրամասնությունների իրավունքների համապարփակ պաշտպանության բազում պարտավորություններ, պետք է կտրուկ քայլեր ձեռնարկի դադարեցնելու հայերի (և ավանդական այլ փոքրամասնությունների) ուժացման քաղաքականությունը: Այս կարգի պահանջները Վրաստանի քաղաքական ընտրանին ու մտավորականությունը որակում են որպես ծայրաստիճան վտանգավոր ու հակապետական: Այսինքն՝ կա պարզ մտավախություն առ այն, որ հեռանկարում հաջորդ քայլը լինելու է Հայաստանին միանալու ձգտումը՝ անջատողական տրամադրությունների խորացումը և այլն: Ստացվում է այնպես, որ այսօրվա Վրաստանի էթնիկ փոքրամասնությունները փաստորեն դարձել են Աբխազիայի և Հարավային Օսիայի սուր հակամարտության, իսկ հետո արդեն տանուլ տված պատերազմի (2008-ի օգոստոսյան) հավերժ պատանդներն ու ակամա զոհերը: Փորձը ցույց է տալիս, որ նման վերաբերմունքն ու գործընթացները չափազանց վտանգավոր են և կարող են հանգեցնել անցանկալի այլ հետևանքների:

Ջավախահայերը իրենց պահանջը հիմնավորում են նաև այն փաստարկով, որ 1990-ականների կեսերին Վրաստանում արհեստականորեն իրար միացվեցին լիովին տարբեր պատմական և էթնոմշակութային նկարագրի մի քանի շրջաններ, և ստեղծվեց, այսպես կոչված, Սամցխե-Ջավախեթի նոր «նահանգը»<sup>3</sup>, որտեղից էլ առանձնացրին հայահոծ Ծալկայի շրջանը և միացրեցին մեկ այլ՝ ազերիաբնակ նահանգի՝ Քվեմո-Քարթլին: Ընդ որում Սամցխե-Ջավախեթի մեջ մտցվեց նաև հանրահայտ Բորժոմի շրջանը: Սա լուրջ ահազանգ էր Ջավախքի հայերի համար, որոնք հստակ գիտակցեցին, որ իրականացվում է Ջավախքի դեմոգրաֆիական պատկերը արմատապես փոխելու անթաքույց հակահայ քաղաքականություն: Փաստորեն հենց այդ քայլով և հենց այդ ժամանակ վրացական կենտրոնական իշխանությունները Ջավախքի մշակութային ու սոցիալ-տնտեսական խնդիրների դաշտին ավելացրին քաղաքական թեժ ու սուր խնդիր: Հավելենք նաև Սամցխե-Ջավախքում թուրք-մեսխեթների վերաբնակեցման մասին շահարկվող խնդիրը (իսկ մինչ այդ աջարների ու սվանների բռնի բնակեցումը), ապա ավելի քան պարզ են դառնում Վրաստանի քաղաքական ղեկավարության իրական ու հեռահար նպատակներն այդ տարածքում: Ջուզահեռաբար Ջավախքում և Վրաստանի ողջ տարածքում բավականին ինտենսիվ ու հետևողական իրականացվում է հայկական պաշտամունքային, կրոնական ու պատմաճարտարապետական հուշարձանների համատարած վրացականացում (*քարթվելիզացիա*) :

Ի վերջո ինքնավարության կամ քաղաքական որևէ այլ կարգավիճակի գաղափարը և նման տրամադրությունները ունեն իրենց օբյեկտիվ ու պատմական հիմնավորումները: Ջավախահայերը և ընդհանրապես վիրահայերը գտնում են, որ վերջին 2-3 հարյուրամյակների ընթացքում անգնահատելի մեծ է եղել հայ ժողովրդի դերն ու նշանակությունը վրացական պետության տնտեսության, առևտրի, մշակույ-

<sup>3</sup> Տե՛ս **Վ. Սարգսյան**, Սամցխե-Ջավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Եր., 2006:

թի, քաղաքաշինության ու արվեստների զարգացման բնագավառում, ինչպես նաև անվտանգության ու պետականության կայացման և ամրապնդման գործում: Անշուշտ, այս ամենը պատմական ու քաղաքական անվիճելի իրողություններ են, որոնք երբեք չպետք է անտեսվեն, սակայն դրանց մասին Վրաստանում խուսափում են խոսել, անգամ տեղին հիշատակել:

Նման սուր և «զգայական» թեմաներից երկուստեք խուսափում են ու կարծես երկխոսությունն էլ երբեմն ընդհատվում է, և դա պատահական չէ: Ինքնավարության յուրաքանչյուր ձգտում կամ անզուլաբար արտահայտած ցանկություն վրացական քաղաքական ու հասարակական արդի «խտաբլիշմենթը» դիտարկում է որպես դավաճանություն: Ի դեպ, այդ իրավիճակում, երբ երկու կողմերի միջև հստակ ու վերջնական պայմանավորվածություններն ու կանքը բացակայում են, չի բացառվում, որ հակամարտության դեռևս «սաղմնային» վիճակում կփորձի միջամտել ու հետագայում օգտվել երրորդ կողմը, որն էլ կդառնա հրահրողը (ինստիգատոր):

Կարգավիճակի գաղափարը հայ-վրացական փոխհարաբերություններում կարող է նաև վերածվել լուրջ ու կառուցողական գործոնի և անգամ կաշխատի երկուսի շահերի օգտին: Այն հետագայում կարող է դառնալ հայ-վրացական սերտ համագործակցության քաղաքական միացնող գործոնը և ուժեղ լծակ մասնավորապես արտատարածաշրջանային հայտնի տարբեր ակտորների ու միջամտությունների նկատմամբ: Վերջապես, ինքնավար Ջավախքը ներդրումների առումով ավելի գրավիչ կլինի ինչպես միջազգային կազմակերպությունների ու տրանսազգային ընկերությունների, այնպես էլ խոշոր տերությունների ու հայկական Սփյուռքի համար:

2006 թվականին հրապարակայնորեն հնչեց Վրաստանի քաղաքական ղեկավարության պաշտոնական դիրքորոշումը Սամցխե-Ջավախքին ինքնավարություն կամ այլ կարգի քաղաքական կարգավիճակ շնորհելու մասին: Այդ խնդրին կարծես վերջակետ դրեց այն օրերի վարչապետ Ջուրաբ Նոդաիդելին: Հայաստան իր այցի ժամանակ, պատասխանելով ինքնավարության վերաբերյալ «Ջավախք» հասարակական կազմակերպության ներկայացուցչի հարցին, նա ասաց. «Վրաստանում արդեն կան ինքնավար մարզեր, և նոր ինքնավարություն այլևս չի ստեղծվելու»<sup>4</sup>: Վրաստանի խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեն իր հերթին մի քանի օր անց ավելացրել է, որ նման պահանջը արևելք է՝ անհեթեթություն, և տարածաշրջանում իրավիճակի լարվածության առիթ կարող է դառնալ, միաժամանակ նման հայտարարությունները չեն համապատասխանում ոչ Վրաստանի և ոչ էլ Հայաստանի արդի շահերին:

### **Դեմոգրաֆիական խնդիր**

1994-ին երկու տարբեր երկրամասերի՝ Սամցխեի ու Ջավախքի արհեստական միավորումը նպատակաուղղված էր նվազեցնելու հայ ազգաբնակչության տոկոսային հարաբերակցությունը: Սահմանադրության համաձայն, սակայն, Վրաստանի վարչատարածքային վերջնական բա-

<sup>4</sup> BAGIN լրատվական Կենտրոն, [www.bagin.info/default.asp?Lang=\\_Am](http://www.bagin.info/default.asp?Lang=_Am), June 2006.

Ժամուճը որոշվելու է միայն պետության ողջ տարածքի նկատմամբ վրաց իշխանությունների վերահսկողության վերականգնելուց հետո: Մինչև այդ երկրամասերում վարչական կառավարումը իրականացնելու են Նախագահի լիազոր ներկայացուցիչները՝ նահանգապետերը:

Վրաստանի 2002 թ. պաշտոնական մարդահամարի (բացառությամբ Աբխազիայի ու Չարավային Օսիայի տարածքների) տվյալներով ողջ երկրում հայերի թիվը՝ 248.9 հազար էր՝ ինչը կազմում էր բնակչության 5.7% -ը, իսկ ըստ 1989 թ. մարդահամարի տվյալների հայերի թիվը 437.2 հազար էր, որը կազմել է բնակչության 8.1 % -ը: Ըստ նույն՝ 2002-ի մարդահամարի՝ Սամցխե-Ջավախքի հայ բնակչության թիվը կազմել է 113.347 մարդ<sup>5</sup>:

Սակայն այս պարագայում առավել մտահոգիչ են վրաց իշխանությունների մոտեցումներն ընդհանրապես էթնիկ փոքրամասնություններին «եկվորներ» ու «բնիկներ» որակումներ կամ նման ձևակերպումներ տալու առումով: Պարզվում է, որ օսերը, ագերիները, ինչպես նաև հայերն ու ռուս դուխոբորները «եկվորներ» են, իսկ, ասենք, թուրք-մեսխերի (կամ ինչպես վրացիներն են ասում՝ մահմեդական մեսխերի) վերաբնակեցումը կատարվելու է նրանց «նախնիների հողի» վրա, այսինքն՝ ստացվում է, որ նրանք սվանների ու մեգրելների նման «բնիկներ են»:

Հետխորհրդային ողջ ժամանակաշրջանում փոքրամասնությունների նկատմամբ Վրացական պետության կողմից իրականացած քաղաքականությունը ոչ միայն չնպաստեց նրանց ինտեգրման գործընթացին, այլև ընդհակառակը, ավելի սրեց և ուժեղացրեց միջէթնիկ հարաբերություններում առկա բացասական գործոնները: Արդյունքը եղավ այն, որ ավանդական փոքրամասնությունների շատերն ավելի հեռացան Վրաստանի նորանկախ պետության քաղաքական, հասարակական ու մշակութային կյանքից, իսկ մյուսները պարզապես լքեցին պապենական տներն ու ունեցվածքը և հեռացան երկրից:

### ***Լեզվա-մշակութային և կրթական հարցեր***

Հետաքրքիր է, որ ըստ Վրաստանի սահմանադրության (1995 թ.), Աբխազիայում արխագերենը լրացուցիչ պետական լեզու է<sup>6</sup>: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում վրացերենի օգտագործումը ուղղորդվում է նաև Քաղաքացիական ծառայության մասին օրենքով (1998 թ.), այսինքն՝ պետական կառավարումը իրականացվում է վրացերենով, բացառությամբ Աբխազիայի: Այսպիսով, արխագերենը ճանաչվել է որպես երկրորդ պետական լեզու, քանզի բնիկների լեզու է, իսկ ասենք հայերենը կամ ադրբեջաներենն ու հունարենը չեն համարվում բնիկների լեզուներ, այլ ընդամենը՝ «եկվորների», ռուսի և չեն կարող ունենալ հատուկ կարգավիճակ: Փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը նախ և առաջ հենվում է միջազգային կարևորագույն փաստաթղթերում ամրագրված հիմնարար հետևյալ սկզբունքների վրա՝ մարդու իրավունքների իրականացման ընթացքում ոչ խտրական վերաբերմունքի դրսևորումները և տվյալ

<sup>5</sup> Տե՛ս **Ս. Մինասյան**, նշվ. աշխ., էջ 121:

<sup>6</sup> Տե՛ս Վրաստանի սահմանադրության 8-րդ հոդված:

փոքրամասնության մայրենի լեզվի, մշակույթի ու կրոնի ազատության միջոցով անհատի զարգացմանն աջակցելու իրավունքները: Այս սկզբունքներն էլ առկա են մասնավորապես ԵԱՀԽ Կոպենհագենի փաստաթղթում (ընդունված 1990 թ.)<sup>7</sup>, Ազգային կամ էթնիկ, կրոնական ու լեզվական փոքրամասնությունների իրավունքների մասին (1992 թ.) հռչակագրում (ՄԱԿ, Մարդու իրավունքների հանձնաժողով), Փոքրամասնությունների լեզուների (1992 թ.) Եվրոպական խարտիան և, իհարկե, Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին (1995 թ.) շրջանակային կոնվենցիան\*:

Վրաստանում միջէթնիկ համագործակցության կարևորագույն խնդիր եղել է և տակավին մնում է լեզվական անջրպետը: Խոսքը վերաբերում է Վրաստանում բնակվող էթնիկ ոչ վրացիների, մասնավորապես ջավախահայերի վրացերեն չիմանալուն, մի կողմ թողնելով լիովին տիրապետելու խնդիրը: Այս հանգամանքը դարձել է ամենաէական հիմնապատճառը, որ փոքրամասնությունները չունեն որևէ մասնակցություն այդ երկրի քաղաքական ու հասարակական կյանքում: Շատերը այն համարում են դեռևս ԽՍՀՄ-ից մնացած ժառանգություն, քանի որ չտիրապետողների գերակշիռ մասը միջին ու հասուն տարիքի է: Այսօր այդ խնդիրը ստացել է քաղաքական լուրջ երանգ, քանի որ պաշտոնական լեզվի չիմացությունը հանգեցնում է նախ և առաջ փոքրամասնությունների կտրուկ օտարմանը և ավելի է բարդացնում նրանց փոխհարաբերությունները պետական մարմինների ու գերատեսչությունների հետ՝ առաջացնելով համայնքային ինքնամեկուսացում, ինչպես նաև մեկուսացում երկրի բարձրագույն կրթական համակարգից: Շատ վրացիներ այդ խնդիրը համարում են ներքին անվտանգությանը սպառնացող և պետության տրոհման գործընթացի նախապայման: Այս ուղղությամբ Ջավախքում և հարևան ազերիաբնակ շրջաններում վրացական իշխանություններն այսօր փորձում են իրականացնել կրթական հապճեպ ու պարտադրական տարբեր միջոցառումներ, որոնք կատարվում են ի հաշիվ փոքրամասնությունների մայրենի լեզվի և կարող են հանգեցնել բոլորովին այլ արդյունքների:

Այնուհանդերձ, այս դիրքորոշման հակափաստարկը հետևյալն է՝ Թբիլիսիի հայերը, ինչպես հայտնի է, տիրապետում են վրացերենին, սակայն նույն «հաջողությամբ» համարյա դուրս են մնացել այդ պետության կառավարման մարմիններից և պետական այլ գործընթացներից: Վրացերենի ուսուցման բացառապես վարչահարկադրական մեթոդների կիրառումը և ազգային տարբեր համակարգերում շուտափույթ ներդրումը իրականում կարող է առաջացնել հակառակ տրամադրություններ մանավանդ երիտասարդության շրջանում:

<sup>7</sup> Տե՛ս «ԵԱՀԽ Մարդկային չափանիշի խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթ», 1990 թ.:

\* «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին Շրջանակային կոնվենցիա» (1995 թ.), Հոդված 5, կետ 1. «Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են նրանց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար»:



Եվրոպական երկրներում գործնականորեն կիրառվող միջազգային կոնվենցիաներն ու հանձնարարականները կարող են Վրաստանի օրենսդրության ժողովրդավարական նորմերին օրինակելի հիմք ծառայել: Այսպես, այսօր ԵԱՀԿ անդամ 8 երկիր ունեն 2 պաշտոնական լեզու, 2 երկիր՝ երեք պաշտոնական լեզու, իսկ 22 պետություններում պաշտոնական լեզվին զուգահեռ այլ լեզուների տրված է հատուկ կարգավիճակ<sup>8</sup>: Այսինքն՝ սա մի այնքան էլ արտառոց երևույթ չէ, որից այդքան սարսափում է վրաց քաղաքական ընտրանին:

Այս առումով տեղին է հիշատակել նաև ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների մասին (1998 թ.) Օսլոյի հանձնարարականները, որի դրույթները լիովին համապատասխանում են վերը նշած պահանջներին: Օրինակ՝ Ջավախքում, որպես էթնիկ փոքրամասնության համախումբ բնակության վայր, հայերենին առանց բարդության հնարավոր է շնորհել տարածաշրջանային և տեղական վարչարարության ու դատավարության լեզվի հատուկ կարգավիճակ:

Վրացական կենտրոնական իշխանությունների կողմից Ջավախքում հայերենին հստակ իրավական կարգավիճակի շնորհումը ի վերջո պետք է ընկալվի ոչ թե որպես զիջում, այլ միջազգային-իրավական ու քաղաքական հայտնի պարտավորությունների բնականոն իրագործում:

Վրաստանում փորձում են այլ կերպ մեկնաբանել կրթության ոլորտը կարգավորող նորմատիվային և իրավական միջազգային ակտերը, որոնք վերաբերում են պետական լեզվի ու փոքրամասնությունների լեզուների օգտագործման խնդիրներին, մանավանդ կրթօջախներում: Օրենքը նախատեսում է բոլոր դպրոցներում անցումը «համավրացական կրթական նոր ծրագրերի», համաձայն որի մինչև 2011 թվականը Վրաստանի պատմություն, գրականություն, աշխարհագրություն և սոցիալական մի շարք գիտություններ պարտադիր պետք է դասավանդվեն վրացերենով: Ըստ Չանրային կրթության մասին նոր օրենքի (2005 թ.)՝ կրթական բոլոր հաստատություններում ուսուցման լեզուն վրացերենն է, իսկ ինչ վերաբերում է ոչ վրացական, դիցուկ՝ հայկական դպրոցներին, ապա այստեղ միայն հայոց լեզու և գրականություն առարկան է տարվում հայերենով<sup>9</sup>: Հայոց պատմություն առարկային հաստատատորված դասաժամեր չեն հատկացվելու, այն լինելու է միայն ֆակուլտատիվ ժամերի հաշվին, իսկ իրականում կվերանա:

Ինչևէ, էթնիկ փոքրամասնությունների կրթական իրավունքների ոլորտը կանոնակարգող միջազգային հայտնի դրույթներ են գործում, ինչպես օրինակ՝ ԵԱՀԿ Ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքիների մասին Հաագայի հանձնարարականները (1996 թ.)<sup>10</sup> և Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան, որի թիվ 13 հոդվածում հստակ ասված է. «Կողմերը իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ճանաչեն, որ ազ-

<sup>8</sup> Տե՛ս «ԵԱՀԿ. Պատմությունը, գործունեությունը և հեռանկարները», բուհական դասագիրք, խմբ. Ա. Հարությունյանի, երկրորդ հրատարակություն, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ, Եր., 2006:

<sup>9</sup> Տե՛ս **Wheatley, John**, The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States, ECMI Working Paper No.26, March 2006:

<sup>10</sup> Տե՛ս Explanatory Note to the "Hague Recommendations Regarding the Education Rights of National Minorities", OSCE, 1996:

գային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծելու ու ղեկավարելու մասնավոր կրթական ու վերապատրաստման սեփական ուսումնական հաստատություններ»<sup>11</sup>:

Հայերեն դասագրքերի հարցն այսօր բարդացել է, դրանք տպագրվում են վրաց կառավարության հսկողությամբ և իրենք էլ տարածում են: Ամեն տարի ՀՀ կառավարությունը ֆինանսավորում է ավելի քան 200 ջավախահայ երիտասարդների բարձրագույն կրթությունը Երևանի տարբեր բուհերում<sup>12</sup>: Հայ-վրացական երկլեզու համալսարանի ստեղծման գաղափարը արդեն որերորդ անգամ ձախողում է վրացական կողմը:

### **Պատմական ժառանգության և կրոնական իրավունքի հարցեր**

Գաղտնիք չէ, որ Վրաստանում գոյություն ունի նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակի խնդիրը և մեր պատման շակութային ժառանգության պահպանման հարցը: Ներկայումս Վիրահայոց թեմը բախվում է բազում դժվարությունների: Այսպես կոչված «վիճելի» եկեղեցիների և էթնիկ փոքրամասնությունների՝ որպես կրոնական համայնքների, իրավական կարգավիճակի հարցին վրացի հոգևոր առաջնորդների ու սպասավորների կողմից հաճախ ավելորդ քաղաքականացված երանգներ են հաղորդվում: Ճիշտ է, անկախության առաջին տարիներին վերաբացվեցին մի քանի հայկական եկեղեցիներ, սակայն խորհրդային շրջանում բռնագրավված կամ Վրաստանի ուղղափառ եկեղեցուն (ՎՈւԵ) փոխանցված հայկական շատ եկեղեցիների ու պաշտամունքային (այդ թվում և հասարակական) կառույցների վերադարձնելու խնդիրը, թվում է, անլուծելի է դարձել: Վերջին շրջանում նկատելի են հայկական եկեղեցիները դիտավորյալ վնասելու և անգամ պղծելու դեպքերը: Տպավորությունն այն է՝ կարծես Վրաստանում մեկնարկած «քարթվելիզացիայի» ակտիվ գործընթացը հմտորեն կառավարվում և ուղղորդվում է ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական ընտրախափ կողմից:

Պատմամշակութային և հոգևոր ոլորտում իրականացվող նպատակադիր գործողություններում առանձնակի ակտիվություն է ցուցաբերում Վրաց ուղղափառ եկեղեցին, որը վերջերս ոչ միայն հայաբնակ Ջավախքում ու Թբիլիսիում, այլև Վրաստանի այլ տարածքներում վերածվել է ազգային փոքրամասնությունների հոգևոր հաստատությունների դեմ չհայտարարված պատերազմի «գլխավոր շտաբի»: Իսկ ՎՈւԵ-ի հեղինակությունը Վրաստանում չափազանց բարձր է: Վրաց ժողովուրդը, հոգնած ու հիասթափված քաղաքական լիդերներից, հայացքն ուղղել է հոգևոր առաջնորդներին և հնազանդվում է անգամ նրանց քաղաքական ու հասարակական կամքին:

Վրաստանում բնակվող ոչ տիտղոսակիր և ոչ ուղղափառ էթնոսների կուտակված արդի խնդիրների նկատմամբ համալիր մոտեցում է անհրաժեշտ, որտեղ շեշտը պետք է դրվի միջազգային իրավական պարտավո-

<sup>11</sup> «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին Շրջանակային Կոնվենցիա», հոդված 13, Ստրասբուրգ, 1995 թ., ԵԽ արխիվ, Council of Europe, www.coe.int.

<sup>12</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարության սփյուռքի բաժնի տեղեկատվությունից, մայիս, 2010 թ.:

րությունների անվերապահ կատարման վրա: Թբիլիսիի հայկական եկեղեցիների նկատմամբ ոտնձգությունների վերջին դեպքերը պետք է դիտարկել միմիայն ներքին օրենսդրական և միջազգային իրավական փաստաթղթերի, բանաձևերի ու նորմերի շրջանակներում: Փորձը ցույց է տալիս, որ այլ կերպ անհնար է: Վրաստանը օր առաջ ձգտում է անդամակցել եվրոպական համայնքին, որպես ոչնչով ետ չմնացող լիարժեք անդամ, սակայն ասիական մայրցամաքից:

Վրաստանը ետխորհրդային միակ երկիրն է, որ չունի կրոնի կամ կրոնական միավորումների մասին առանձին օրենք (այսինքն՝ բացի ՎՈւԵ-ից մնացած բոլոր կրոնական համայնքները փաստորեն դուրս են իրավական դաշտից), որը բացատրվում է վրաց պատմության և իրականության մեջ ՎՈւԵ-ի բացառիկ դերով, ինչպես նաև հատուկ կարգավիճակով ու աննախադեպ ազդեցությամբ, այնինչ՝ ըստ սահմանադրության եկեղեցին լիովին անջատված է ու անկախ է պետությունից, ինչպես ժողովրդավարական ժամանակակից երկրներում<sup>13</sup>: ՎՈւԵ-ն վայելում է նաև արտոնություններ, այդ թվում հարկերի վճարման, գույքի ու հողի սեփականության հարցերում, և դա այն դեպքում, երբ կրոնական այլ միավորումներ ու համայնքներ գործնականում զուրկ են տարրական իրավունքներից, առավել ևս՝ արտոնություններից:

Մինչև հիմա Վրաստանի Հայ առաքելական, Կաթոլիկ (Հռոմի) և Լյութերական-ավետարանչական եկեղեցիները հրաժարվում են մասնավոր իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակից, պահանջում են կրոնական միավորումների ու կազմակերպությունների մասին հստակ օրենք և յուրաքանչյուրի հետ առանձին Կոնկորդատի ստորագրում<sup>14</sup>:

Ըստ վիրահայոց թեմի ներկայացուցիչների՝ բախումնային միջադեպերը հաճախ առաջանում են ոչ այնքան կենտրոնական իշխանությունների գործողությունների ու հրահանգների հետևանքով, որքան ՎՈւԵ հոգևոր սպասավորների հետևողական ու թշնամական դիրքորոշումից: Ինչն էլ հետագայում պարտադրում է իշխանություններին միակողմանի կոշտ քայլեր ձեռնարկել:

Մշակութաբանական և, իհարկե, կրոնական անհանդուրժողականության նման պայմաններում զգալիորեն լարված են Վրաստանի Պատրիարքարանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փոխհարաբերությունները<sup>15</sup>:

<sup>13</sup> ՎՈւԵ-ի սահմանադրական հատուկ կարգավիճակը ամրագրվել է 2002 թ. հոկտեմբերի 14-ի Կոնկորդատով՝ պաշտոնապես՝ «Վրաստանի պետության և Վրացական առաքելական ինքնիշխան ուղղափառ եկեղեցու միջև սահմանադրական մի համաձայնագիր»: Հատկանշական է, որ այդ համաձայնագրի կնքման նախապատրաստության առնչությամբ Վրաստանի խորհրդարանը հատուկ օրենք ընդունեց «Վրաստանի Սահմանադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին», որով 9-րդ հոդվածում հայտնվեց ՎՈւԵ-ին հատուկ կարգավիճակ շնորհող 2-րդ կետը:

<sup>14</sup> Տե՛ս "International Religious Freedom Report, Georgia". Released by the Bureau of Democracy, Human Rights and Labour. US Department of State, Washington D.C., 2006:

<sup>15</sup> Եզնիկ սրբազանը Գերագույն հոգևոր խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Վրաց եկեղեցու պետի և Վիրահայոց թեմի թեմական խորհրդի խնդրանքով Ամենայն Հայոց կաթողիկոսի այցը Վրաստան հետաձգվել է հոկտեմբեր ամիս: 2010-ի հոկտեմբերի 22-23-ը Նորին Սրբությունը Իլյա Երկրորդի հյուրը կլինի, իսկ հոկտեմբեր 24-28-ը հովվապետական այց կկատարի Վիրահայոց թեմ՝ Թբիլիսի ու Ջավախք: (Տե՛ս *Գերագույն հոգևոր խորհրդի ժողով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ARMENPRESS, 2-ը հունիսի 2010 թ.*):

Մենք մեծապես կարևորում ենք և ակնկալում ենք այդ հարաբերությունների ժամ առաջ բարելավում:

**Ջավախքի խնդիրները միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների զեկույցներում ու հաշվետվություններում ( ICG & ECMI)**

Հարկ է նշել, որ մեծ թվով միջազգային ոչ կառավարական, առանձին պետությունների ՀԿ-ներ ու հետազոտական կենտրոններ, միջազգային ու պետական կառույցներ, այդ թվում՝ ԵԽԽՎ-ի, ՆԱՏՕ-ի, ԽՎ-ի, ՄԱԿ-ի Սոցիալ-տնտեսական խորհրդի Մարդու իրավունքների հանձնաժողովը, Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան (FIDH), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID) և պետդեպարտամենտը, Մարդու իրավունքների եվրոպական կենտրոնը (ECMI) և այլն, անդրադարձել են Ջավախքի ու ջավախահայության արդի խնդիրներին և հրապարակել են բազում զեկույցներ ու հաշվետվություններ: Անհնար է անգամ թվարկել դրանք, որոնք հիմնականում լույս են տեսնում անգլերեն կամ ռուսերեն և որպես կանոն պարունակում են առաջարկներ ու հանձնարարականներ ուղղված վրացական կառավարությանը: Դա խիստ կարևոր է և օգտակար խորհրդատվական առումով, քանզի շատ դեպքերում էթնիկ փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններն ու միությունները այս կամ այն խնդրի լուծման մեխանիզմներ առաջարկելիս հանդես են գալիս բավականին ծայրահեղ հայտարարություններով ու միանշանակ դիրքերից:

Թերևս մեծ հետաքրքրություն էր առաջացրել Միջազգային ճգնաժամային խմբի<sup>16</sup> (ՄԳԽ-ICG) հրապարակած «Վրաստանի հայ և ազերի փոքրամասնությունները» հայտնի զեկույցը (թիվ 178, նոյեմբեր, 2006 թ.)<sup>17</sup>, որն ամփոփվում է վրացական իշխանություններին տրված հստակ հանձնարարականներով՝ կապված ազգային փոքրամասնությունների նկատմամբ համապարփակ քաղաքականության մշակման ու արդյունավետ իրականացման, պետական կառավարման, կրթության ոլորտում ու դատաիրավական համակարգում, տեղական ինքնակառավարման մարմիններում փոքրամասնությունների իրավունքների ապահովման և նրանց մասնակցության հնարավորությունների ընդլայնման հրատապ խնդիրների հետ: Ահավասիկ դրանցից մի քանիսը՝ ըստ ոլորտների.

<sup>16</sup> Այսօր, թերևս, ՄԳԽ-ն (ICG), որի կենտրոնակայանը Բրյուսելում է, ամենահայտնի և ազդեցիկ միջազգային վերլուծական կենտրոններից է: Նրա զեկույցներից և նյութերից օգտվում են աշխարհի շատ կառավարություններ և անգամ պաշտոնական մակարդակով հետևում են խմբի հանձնարարականներին ու առաջարկներին: ԱՄՆ պետքարտուղարի նախկին տեղակալ Սթրոուբ Թալբոթը ՄԳԽ-ի մասին գրել է. «Երբ ես պետքարտուղարի տեղակալ էի, օգտվում էի այդ խմբի «արտադրանքից»: Նրանց զեկույցներն ու վերլուծությունները սովորաբար պարունակում էին տեղեկատվություններ, որը հնարավոր չէր ստանալ այլ տեղերից: Եվ զարմանալի չէ, որ նրանց երաշխավորությունները հաճախ տեղ էին գտնում մեր քաղաքական վերջնական որոշումներում»: Թբիլիսիում ՄԳԽ-ի տարածաշրջանային գրասենյակը հնարավորություն է ընձեռում ուշադրության կենտրոնում պահել Հարավային Կովկասի հակամարտությունները և կոնֆլիկտածին (ինչպես էթնիկ, այնպես էլ ներքաղաքական ու միջպետական) իրավիճակները: Այսպես, նրանք բազմիցս անդրադարձել են Աբխազիայի, Հարավային Օսիայի, Աջարիայի խնդիրներին, իսկ ԼՂ հակամարտությանը՝ երկու զեկույցով:

<sup>17</sup> Տե՛ս International Crisis Group, ICG, "Georgia's Armenian and Azeri Minorities", Crisis Group Europe Report, Issue No.178, Nov 2006:

**«Հանձնարարականներ Վրաստանի կառավարությանը.  
Ազգային փոքրամասնությունների նկատմամբ համապարփակ  
քաղաքականության մշակման և արդյունավետ իրականացման հա-  
մար**

- Վավերացնել Տարածաշրջանների լեզուների և փոքրամասնու-  
թյունների լեզուների Եվրոպական խարտիան, ինչպես նաև Տարածքա-  
յին համայնքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային հա-  
մագործակցության մասին Եվրոպական շրջանակային Կոնվենցիան,
- Փոքրամասնություններին հուզող հարցերի շուրջ անցկացնել  
խորհրդատվություններ քաղաքապետարանների, տեղական ինքնակա-  
ռավարման մարմինների (սակրեբուլո) հետ, այնտեղ, որտեղ փոքրամաս-  
նությունները կազմում են բնակչության ավելի քան 20%-ը: Քաղաքիա-  
կան ինտեգրման և տղերանտության (հանդուրժողականության) ազգա-  
յին խորհրդում ընդգրկել փոքրամասնությունների ներկայացուցիչներին,
- Քվեմո-Քարթլիում և Սամցխե-Ջավախեթում ապահովել երեկոյան  
նորությունների հեռուստահաղորդումներ փոքրամասնությունների լեզու-  
ներով:

**Պետական կառավարման և կրթության ոլորտում փոքրամաս-  
նությունների իրավունքների ապահովման համար**

- Ընդունել օրենսդրություն, որը թույլ կտա ազերիներին ու հայերին  
մունիցիպալ այն համայնքներում, որտեղ նրանք կազմում են բնակչու-  
թյան ավելի քան 20 %-ը, օգտագործել մայրենի լեզուն վարչական իշ-  
խանությունների ներկայացուցիչների հետ շփման, բողոքների ներկա-  
յացման, քաղաքացիական փաստաթղթերի և դիպլոմների ստացման,  
պետական ծառայություններից օգտվելու, քաղաքապետարաններում  
ներքին գործավարության և տեղական ինքնակառավարման մարմիննե-  
րի (սակրեբուլո) նիստերի ժամանակ,
- Հանրային կրթության մասին 2005 թ. Օրենքում ընդունել փոփո-  
խություններ, ընդ որում շեշտել փոքրամասնությունների համախումբ  
բնակչության վայրերում երկլեզու կրթական համակարգի ներդրման ու  
սոցիալական հիմնական առարկաների ադրբեջաներենի ու հայերենի  
(վրացերենին զուգահեռ) ուսուցման անհրաժեշտության մասին,
- Հայաստանի և Ադրբեջանի հետ Վրաստանի ազգային դպրոցնե-  
րի համար պատմության դասագրքերի նախապատրաստման համապա-  
տասխան հանձնաժողովներ ստեղծել:

**Դատաիրավական համակարգում և տեղական ինքնակառա-  
վարմանը փոքրամասնությունների մասնակցության հնարավորու-  
թյունների ընդլայնման նպատակով**

- Մունիցիպալ կազմավորումներում թույլատրել դատավարություն-  
ները վարել ադրբեջաներեն ու հայերեն, եթե տարածքի փոքրամասնու-  
թյունը կազմում է բնակչության 20 տոկոսից ավելին,
- Բոլոր նոր օրենքները թարգմանել և հրապարակել հայերեն ու  
ադրբեջաներեն,
- Վերացնել իրավաբանական և վարչական խոչընդոտները տարա-  
ծաշրջանային և ազգային պատկանելիությամբ ստեղծված քաղաքա-

կան կուսակցությունների գրանցման համար և նվազեցնել նրանց խորհրդարան անցնելու շեմը մինչև 5 տոկոս,

**Թբիլիսի – Բրյուսել, 22 նոյեմբերի, 2006 թ. »<sup>18</sup>:**

Փոքրամասնությունների հարցերի եվրոպական կենտրոնը (ՓՅԵԿ-ECMI) Ջավախքում իր գործունեությունը սկսել է 2003-ից: Այս կազմակերպության ջանքերով Ախալքալաքում հիմնվել է «Ռեսուրս կենտրոն», այն աջակցել է նաև «Ջավախքի քաղաքացիական ֆորումի» ստեղծմանը (2005 թ.): ՓՅԵԿ-ը նպաստում է քաղաքացիական հասարակության կայացմանն ու ամրապնդմանը՝ օգտագործելով հասարակական ուժերն ու ակտիվ երկխոսությունը կենտրոնական դերակատարների հետ: Այն միաժամանակ անցկացրել է մի շարք ուսումնասիրություններ և հրատարակել բազմաթիվ զեկույցներ: Ջավախքին նվիրված առաջին աշխատանքային հաշվետվությունը կոչվել է «Վրաստանի Ջավախքի շրջանի տարածաշրջանային ինտեգրմանը խոչընդոտող հանգամանքները» (հեղինակ՝ Ջոնաթան Ուիթլի, 2004 թ.)<sup>19</sup>: Իսկ 2006 թ. ՓՅԵԿ-ը շատ ավելի խորաթափանց ու հանգամանորեն անդրադարձավ Ջավախքի խնդիրներին, որի արդյունքում 2007-ի ապրիլին լույս տեսավ ծավալուն մի Ձեկույց (թիվ 38), որը վերնագրված է «Ջավախքին Վարդերի հեղափոխությունից հետո. Առաջընթաց և ետընթաց Վրաստանում ազգային միասնության որոնման ճանապարհին»<sup>20</sup> (հեղինակ՝ Յեդվիգ Լոմ):

Ձեկույցում տեղ են գտել Ջավախքի արդի հրատապ խնդիրների մանրամասն նկարագրությունը սոցիալ-տնտեսական, ազգային և քաղաքական հարցերի տեսանկյունից, միջազգային կառույցների և տեղական հասարակական կազմակերպությունների գործունեության հիմնական ուղորտները, շահագրգիռ և հարևան պետությունների մասնակցության իրական նպատակները, միջազգային իրավական նորմերի և ստանձնած պարտավորությունների իրականացման առումով Վրաստանի իշխանությունների գործելաոճն ու դիրքորոշումը, քաղաքացիական ինտեգրման անհետևողական քաղաքականությունը, անցկացված ընտրությունները, տեղական ինքնակառավարման մարմիններում փոքրամասնությունների մասնակցության նակարդակը, լեզվամշակութային, պատմական և հոգևոր խնդիրների ու տարածայնությունների հիմնապատճառները, դեմոգրաֆիական փոփոխության սպառնալիքը, Ջավախքի քաղաքական կարգավիճակի հստակեցման պահանջը և վերջապես՝ զանգվածային լրատվության միջոցների ժամանակակից դերը: Սակայն «Ձեկույցը» չունի հանձնարարականներ, ինչպես ասենք ՄԾԽ-ի հաշվետվությունը, այն ավարտվում է «Ամփոփիչ մեկնաբանություններ» առանձին գլխով:

Հարկ ենք համարում այս համատեքստում նշել նաև մեկ այլ հաշվետվության մասին, որը հրապարակվել է դեռևս 2006-ի սեպտեմբերին ԱՄՆ-ում և բավականին լուրջ ուսումնասիրություն է, որտեղ անդրադարձ

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը՝ Recommendations:

<sup>19</sup> Տե՛ս "Obstacles Impeding the Regional Integration of the Javakheti Region of Georgia" by Wheatley, J., European Center for Minority Issues, ECMI, Working Paper No.22, Sep. 2004:

<sup>20</sup> Տե՛ս "Javakheti after the Rose Revolution: Progress and Regress in the Pursuit of National Unity in Georgia", by Hedvig Lohm, European Center for Minority Issues, ECMI, Working Paper No.38, April 2007:

է արված համարյա բոլոր հիմնահարցերին, որ ցարդ հուզում են Վրաստանի փոքրամասնություններին, մասնավորապես՝ իրավապաշտպանական հարցերին, խտրական քաղաքականությանը և այլն: Այն ստեղծվել է հայտնի Ջոնս Ռոֆֆինսի (Վաշինգտոն) և Ուփսալայի (Շվեդիա) համալսարանների Կենտրոնական Ասիա և Կովկաս ինստիտուտի և «Մետաքսի ճանապարհ» հետազոտական ծրագրի համատեղ նախաձեռնությամբ: Վերնագրված է՝ «Ազգային փոքրամասնությունները և պետությունները Հարավային Կովկասում. Վրաստանի և Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների պաշտպանության գնահատում»<sup>21</sup>:

Ձեկույցի եզրակացությունների մասում գրված է. «Չնայած չի կարելի չնշել Վրաստանի իշխանությունների գործադրած ջանքերը իրավապաշտպանական մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ, այնուամենայնիվ հետհեղափոխական տարիներին Վրաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համակարգը դեռևս թույլ է և ոչ արդյունավետ: Վրացական ղեկավարության մոտ տակավին զգացվում է որոշ թերահավատություն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգայնորեն ճանաչված նորմատիվների ընդունման առումով, ուստի ստեղծվում է տպավորություն՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության կառույց հիմնելու անհրաժեշտությունը վրացական իշխանությունների կողմից ասես ընկալվում է որպես մի ծանր պարտականություն, այլ ոչ թե ստանձնած պարտավորությունների իրականացման անկեղծ ձգտում»<sup>22</sup>:

Եթե հաշվի առնենք եվրոպական այն հայտնի արժեքները, որոնց ապավինում է Սահակաշվիլի իշխանությունը, և այն պարտավորությունները, որ ստանձնել են վերջին 10-15 տարիներին նույն եվրոպական կառույցների առջև, ապա Վրաստանում վաղուց պետք է լուծված լինեին բոլոր այն հիմնախնդիրները, որոնք այսօր այդքան խորն ու ցավալի անհանգստացնում են այդ երկրի ավանդական փոքրամասնություններին: Վրաց բազմաէթնիկ հասարակության միջնակության մերդաշնակ կոնսոլիդացիան մեծապես կնպաստի տարածաշրջանային անվտանգության և կայունության ամրապնդմանը:

**ԱՐԱՄ ԱՐՄՅՈՒՅԱՆ – *Проблемы Джавахка в документах международных и неправительственных организаций.*** – Грузия – многонациональное государство, закладывающее основы демократических институтов и гражданского общества. Однако успехи страны в деле интеграции армянского и других этнических меньшинств пока незначительны. В регионе Самцхе-Джавахети (Джавахк), где компактно проживает армянская община, сложилась напряжённая ситуация, которая выражалась в последние годы демонстрациями, заявлениями о жестокости полиции, арестами, дискриминацией и даже убийствами. Армяне Джавахка заявляют о своём желании самостоятельно принимать решения в таких сферах, как образование на родном языке и культура.

<sup>21</sup> Տե՛ս Ժոնս Դոկլադ Ինստիտուտ Կենտրոնական Ասիայի և Կովկասի և Իսսլեդովատելսկայա պրոգրամա "Շեկոկոյ ընտր" ունիվերսիտետ Ժոնսոն-Հոփկինս (Վաշինգտոն, ՄՊՊ) և ունիվերսիտետ ց. Սփսալա (Շվեդիա) // "Ունիվերսիտետնայնա և ունիվերսիտետնայնա Յոժնոն Կովկաս: օնեոնա ձաժնիտնայնա ունիվերսիտետնայնա և Կովկասնայնա". Տեոնտբր 2006 ց.:

<sup>22</sup> Նույն տեղում:

Степень участия национальных меньшинств в политической жизни страны, что является ключевым условием эффективной интеграции, тревожно низка. Из-за отсутствия диалога с Тбилиси в общинах усиливается ощущение дискриминации и отчуждённости. При этом риска, что напряжённость перерастёт в угрозу территориальной целостности страны, практически нет. Тем не менее, правительству Грузии следует с большим вниманием отнестись к правам этнических меньшинств, в том числе к принятым им на себя обязательствам и к рекомендациям международных организаций.

Не прекращается эмиграция меньшинств как в Армению, так и в Азербайджан. Однако Ереван и Баку воздерживаются от открытой поддержки соответственно армянской и азербайджанской общин, отдавая приоритет сохранению добрых отношений с Тбилиси и стабильности в хрупком регионе.

**ARAM HARUTYUNYAN – *The Javakhk issues in the reports of international and non-governmental organizations.*** - Georgia is a multinational state that builds democratic institutions and lays foundations of a civil society. However, it has made an insignificant progress in integrating with Armenian and other ethnic minorities.

In the region of Samtskhe-Javakheti (Javakhk), where Armenians predominantly live, there are evident tensions and people have seen protests, police brutality, arrest and discriminations, and even killings over the past years. Armenians in Javakhk want to take their own decisions on such issues as education, native tongue, and culture.

Political participation and representation of ethnic minorities in public spheres – a key to more effective integration – is disturbingly low. Lack of dialogue between Tbilisi and minorities adds to perceptions of discrimination and alienation.

While there is no risk of this situation posing threats to Georgia's territorial integrity, Tbilisi needs to pay more attention to minority rights, including obligations assumed, as well as the recommendations by international organizations.

Minorities have been emigrating to Armenia and Azerbaijan as well. Yerevan and Baku, however, restrain themselves from publicly supporting their respective minorities. They prioritize having good relations with Tbilisi and maintaining stability in this fragile area.